սրանք դուրս եկան հնչեցնելով ու բարբաջանքներով, դիոլով ու զուռնայով, սուլելով ու ծափերով, իսկ ուրացած Ճաճինը նրանց առջևից: Երբ Զաքարիա վարդապետը տեսավ այդ բանը, կանգնեց և հրամայեց, որ զգեստավորվածները հետ դառնան: Իսկ ինքը իջավ ջորուց, հրամայեց սուրհանդակներին բռնել ուրացող Ճաճինին և կոխոտել: Եվ (Զաքարիան) հանեց կոշիկները, բռնեց ուրացողի գլուխը և կոշիկի մեխերով խփում էր, մինչև որ վիրավորեց, արյունաշաղախ արեց:

Պիղծ ուրացողը գոռում էր՝ մի՞թե մահմեդականների հավատքը գետին կործանվեց, որ այս հայը ինձ սպանում է: Թաթարները այս լսելով հարձակվեցին Զաքարիայի վրա, որ նրան սպանեն: Մեծամեծ մահմեդականները սրերը բարձրացրին, նրանք ասացին՝ դուք կամենում եք մեր ամբողջ ազգը ջնջել տալ: Սրանք շահի հրամանով մեր հաճույքի համար են անում. ահա խանը պատրաստված սպասում է սրանց, իսկ դուք հակառակ շահին ու խանին եք գործում: Այս բանը լսելով դադարեցրին: Եվ ապա խանին հայտնեցին ջրօրհնեքի հետ դառնալու մասին, իսկ խանը բազմաթիվ միջնորդներ ուղարկեց, հազիվ համաձայնվեցին գնալ և ջուրն օրհնել: Ջրօրհնեքի ավարտին խանը հրամայեց և բերին երկու թանկագին պատմուճան՝ մեկը կաթողիկոսի, իսկ մյուսը Զաքարիայի համար: Խանը թաթարներից բռնեց երեսուն մարդ, որոնք հակառակն արին. նրանցից առավ երեք հարյուր թուման, իսկ պիղծ ուրացող Ճաճինին գցեց ու բերդից դուրս արեց: Եվ (նա) Աստծու առջև սևերես մնաց:

ԳԼՈՒԽ ԻԲ
ՓՈՔՐ ՇԱՀ ԱԲԱՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԱՐՔԻ ՄԱՍԻՆ

1091 (1642) թվին պարսից Շահ Սաֆի թագավորը մեռավ, թագավորությունը ստանձնեց նրա Աբաս որդին՝ խելոք ու գիտուն մի մարդ: Նրա թագավորության ժամանակ հաստատվեց նրա գործը: Քանզի սրա հայր Շահ Սաֆին մինչդեռ Երևանում էր, հնդիկները Ղանդահարը[129] գրավեցին, իսկ այս Շահ Աբասը գնաց, պատերազմեց նրանց դեմ մեծ ուժով և գրավեց այն բազմաթիվ հնարներով, ապա վերադարձավ Սպահան: Մտադրվեց գնալ Բաղդադի

վրա՝ գրավել այն: Իսկ իշխաններն ու մեծամեծները չթողին, ասելով՝ քո հայրը հաշտություն կնքեց նրանց հետ՝ երդումով ու անեծքով. և պայման դրին երեսուն տարի մնալ հաշտ: Իսկ ահա հինգվեց տարի էլ դեռ չի անցել դաշնադրությունից, և դու ինչո՞ւ ես ուխտազանց, դաշինքադրուժ ու անիծահար լինում, երբ խոհեմ արքան այս լսեց, հետ կանգնեց իր մտադրությունից և մնաց խաղաղ:

Սա սիրում էր քրիստոնյաներին, երբ ճաշկերույթ էր տալիս իր մեծամեծներին ու նախարարներին, հրավիրում էր նաև Զուղայի ավագանուն՝ խոջա Սաֆրազին, խոջա Պտումին: Նաև գնում էր քրիստոնյաների տները, հարսանիքները, պատիվներին խտրություն չէր դնում: Ուղղադատ էր ու իրավարար: Այսպես էլ մնաց իր կենդանության ժամանակ: Նաև իր անունով առաջին թագավորների համեմատությամբ ավելի մեծ դրամ կտրեց և անվանեց սհաբ-դրան:

ԳԼՈՒԽ ԻԳ
ԱՐՏԱԲԻԼԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՅՈՒՄԸ

Ինչպես շատ անգամ ասել եմ, թե մեծ ու առաջին Շահ Աբասը հայերին քշեց տարավ, բնակեցրեց Պարսկաստանում, նույնպես նաև Արտաբիլ քաղաքում բնակեցրեց քիչ քրիստոնյաներ (հայեր): Այնտեղ շահի հրամանով շինեցին մի փոքրիկ եկեղեցի՝ իրենց մզկիթին մոտիկ, որին կոչում են Շեյխսաֆի. սա ըստ հայերի թվի Փայտակերտ էր: Քիչ-քիչ քրիստոնյաները շատացան, իսկ եկեղեցին փոքր էր, չէր բավականացնում ժողովրդին, ուստի խիստ նեղվում էին: Այս պատճառով մտածեցին եկեղեցու արևմտյան պատը քանդել, ընդարձակել փոքր-ինչ, որ բավականացնի: Մուղրիները (գրակարդացները) ու մոլլաները իմացան, գրոհ տվին, հավաքվեցին և միաբանվելով՝ եկեղեցին հիմքից քանդեցին: Իսկ քրիստոնյաները գնացին աղմուկ բարձրացրին իշխանի դռանը, բայց իշխանը չկարողացավ դեմը առնել: Եվ խանը (իշխանը) ասաց՝ ահա նրանք արին ըստ իրենց կամքի, ինձ չլսեցին, ուստի ես նամակ կգրեմ եպարքոսին, իսկ դուք գնացեք նրա մոտ և նրա թույլտվությամբ աղերսագիր գրեք շահին, թերևս մի ողորմություն լինի ձեզ: